ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-468²-20.03.2014,20.02.2015-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 37-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «**Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին**» ՀՀ օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արա Բաբլոյան 06.03.2015 թվականի թիվ	Մասնավոր գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը գերեզմանատան տարածքում չի կարող ունենալ դիահերձարան, հետևաբար առաջարկվող օրենքի նախագծի 12-րդ հոդվածում առաջարկում ենք հանել 19.1 հոդվածի 5-րդ(ներկայիս 4-րդ) մասի 1-ին կետի դ. ենթակետը:	Ընդունվել է :	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, որով մասնավոր գերեզմանատան սեփականատիրոջ համար դիահերձարան ունենալու պահանջը հանվել է:

	012-6764 գրություն			
2	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան Մարգարյան	Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետում մասնավոր գերեզմանատան հասկացության մեջ «կազմակերպությանը» բառը փոխարինել «իրավաբանական անձանց» բառով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
3	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	Նախագծի 4-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակ տարանջատել պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները տեղական ինքնակառավարման մարմնի իրավասություններին՝ և իրենց բնույթով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունը վերապահել վերջիններիս:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Մասնավորապես հստակ սահմանվել են պետական լիազոր մարմնի իրավասությունները Նախագծի 4-րդ հոդվածում և դրանք տարանջատվել են տեղական ինքնակառավարման մարմնի

				իրավասություններից:
4	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում «Տեղական ինքնակառավարման մարմինների» բառերից հետո անհրաժեշտ է նշել «համայնքի ղեկավարի» բառերը:	Ընդունվել է մասնակի:	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, սակայն, թվարկված կետերի վերլուծությունից բխում է, որ դրանք վերաբերում են համայնքի ղեկավարի իրավասություններին, ուստի նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
5	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերը անհրաժեշտ է խմբագրել՝ ապահովելով իրավական որոշակիությունը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Մասնավորապես 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-

				րդ կետերը շարադրվել են այլ խմբագրությամբ՝ բացառելով տարրմբռնման հնարավորությունը:
6	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան Մարգարյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ապահովման» բառը փոխարինել «պահպանման» բառով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «որոշումների» բառը փոխարինել «որոշումներ» բառով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
8	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Գերեզմանատների զբաղեցրած հողերի կառուցապատման սխեմաների մշակման, դրանց սահմանների փոփոխման, նոր գերեզմանատների կազմակերպման աշխատանքները համակարգելը» Նույն մասի 9-րդ կետը շարադրել	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		հետևյալ խմբագրությամբ «Մասնավոր գերեզմանատան կառավարման համար տրված թույլտվության պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացնելը.»		
9	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հուղարկավորությունը կարող է կատարվել մասնավոր գերեզմանատանը մահացածի ցանկությամբ կամ նրա հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի ցանկությամբ»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
10	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հուղարկավորության իրականացման	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	Մարգարյան	համար ներկայացվում է միայն քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների կողմից տրված մահվան վկայական».		
11	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Մասնավոր գերեզմանատների կազմակերպումը և դրանց գործունեությունը»: Նույն հոդվածի 1-ին մասում «տեղական ինքնակառավարման մարմնի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի (համայնքներում՝ համայնքի ղեկավարի կողմից» բառերով: Նույն հոդվածի 4-րդ մասում և 10-րդ մասում համապատասխանաբր «սեփականատիրոջ» և «կազմակերպության» բառերը փոխարինել «իրավաբանական անձի	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերով՝ հաշվի առնելով տերմինաբանական միասնականությունը ապահովելու խնդիրը, իսկ «դրամային» բառը «դրամական» բառով: Նույն հոդվածի 7-րդ մասի վերջին պարբերությունում «օտարման» բառը հանել, 8-րդ մասում հանել «լուծարման» բառը՝ հաշվի առնելով այն, որ լուծարման դեպքում իրավունքները և պարտականությունները այլ անձի չեն անցնում, 10-րդ մասում «պարտավոր է» բառից հետո լրացնել «գերեզմանատան» բառերը:		
12	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.2 հոդվածի 3-րդ մասում «համաձայն» բառը փոխարինել «հիման վրա» բառերով, իսկ 5-րդ մասում նախատեսել սեղմ ժամկետում ծանուցելու պահանջը: Նույն հոդվածի 6-րդ մասում «կանոնների» բառից հետո ավելացնել «և նորմերի» բառերը, իսկ 7-րդ մասում «տնօրինությունը» բառը փոխարինել «սեփականատերը» բառով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

13	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արփինե Հովհաննիսյան 12.03.2015 թվականի թիվ 12-7417 գրություն	1. Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումից հստակ չէ, թե առավելագույնը 12 քառակուսի մետև հողատարածքը որքան գերեզմանատների համար է տրամադրվում (արդյոք տրամադրվում է 4, թե 5 գերեզմանատեղի համար), եթե 5, ապա առաջարկվում է <<12 քառակուսի մետր բառերը>> փոխարինել <<12,5 քառակուսի մետր>> բառերով: 2. Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.1-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել՝ <<Կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասում մասնավոր գերեզմանատան կազմակերպումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե կառուցապատման պայմանագրով հստակ սահմանված է, որ հողամասի սեփականատերը հողամասը կառուցապատման է տրամադրել մասնավոր գերեզմանատուն կազմակերպելու նպատակով>>:	Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		3. 19.1-րդ հոդվածի 7-րդ մասում (ներկայիս՝ 6-րդ մաս) <<օտարելու>> բառից հետո լրացնել <<կառուցապատման իրավունքի փոխանցման>> բառերով: Քանի որ իրավունքները պետք է փոխանցվեն նաև այն դեպքում, երբ տեղի է ունեցել կառուցապատման իրավունքի փոխանցում:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		4. Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.2-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկում ենք <<պայմանագրի ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում>> բառերը փոխարինել <<մինչև պայմանագրի ժամկետը լրանալը մեկ տարվա ընթացքում>> բառերով: Նշված կարգավորումը հնարավորություն կտա հավասարակշռել պայմանագրի կողմերի շահերը, քանի որ առաջարկվող կարգավորմամբ պայմանագրի ժամկետի ավարտից հետո գերեզմանատան սեփականատերը հարկադրված չի լինի ևս մեկ տարի ծառայություններ մատուցել:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

14	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Վահրամ Մկրտչյան 16.03.2015 թվականի թիվ 012-7854 գրություն	Նախագծի 12-րդ հոդվածով սահմանված 19.1 հոդվածում առաջարկում եմ 5-րդ մասի (ներկայիս՝ 4-րդ մաս) 1-ին կետի բ. ենթակետից հանել <<նվազագույնը 100 քառակուսի մետր մակերեսով, >> բառերը, գ. ենթակետից հանել << նվազագույնը 150 քառակուսի մետր մակերեսով>> բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
15	ՀՀ Կառավարություն	1. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետով առաջարկվող տարբերակի ընդունումը սպառնալիք է հանրային առողջությանը, քանի որ սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման 2-օրյա ժամկետից հրաժարվելը պարունակում է վարակիչ հիվանդությունների տարածման իրական վտանգ: Դիակիզման ժամկետ չնախատեսելու դեպքում սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգի աղբյուր հանդիսացող	Ընդունվել է:	Նախագծում 2-օրա ժամկետը հանվել է:

		մարմինը (դի) կարող է պահվել անորոշ ժամկետով, որը բնակչության կյանքի և առողջության համար էական ռիսկեր պարունակող սանիտարահամաճարակային իրավիճակ կարող առաջացնել: Մինչդեռ մինչև 2-օրյա ժամկետի սահմանումը թույլ է վերացնել վտանգ աղբյուրը և կանխարգելել վարակիչ հիվանդություններ տարածումը: 2. Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 42-րդ, 421 , 236-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշումը հայտնում եմ, որ անհրաժեշտ է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 156.1-րդ հոդվածի 1-ին մասից հանել «սանիտարական	Ընդունվել է:	Նախագծի 156.1-րդ հոդվածից հանվել են <<բնապահպանական և սանիտարական նորմերը>>

		նորմերը» բառերը: Քանի որ սանիտարական և բնապահպանական նորմերի նկատմամբ վերահսկողության իրականացումը չի կարող վերապահվել տեղական ինքնակառավարման կամ տարածքային կառավարման մարմիններին: 3.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «244-րդ հոդվածի» բառերը անհրաժեշտ է փոխարինել «244[11] հոդվածի» բառերով:		բառերը:

			Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
16.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Արաիկ Հովհաննիսյան	<<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ է ներկայացրել նաև Երևանի քաղաքապետարանը, որով սահմանվել է քաղաքացիական հոգեհանգստի հասկացությունը և դրա հետ կապված այլ նորմեր: Ուստի առաջարկվում է <<քաղաքացիական հոգեհանգիստ>> հասկացությունը հանել Նախագծի 2-րդ հոդվածից:	Ընդունվել է:	Նախագծից հանվել է հասկացությունը: Արդեն իսկ ընդունված <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքով սահմանվել է <<քաղաքացիական

				հոգեհանգիստը>>:
17.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Ստեփան Մարգարյան	1.Նախագծով մասնավոր գերեզմանատան կառավարիչ չլինելու պարագայում, մասնավոր գերեզմանատան կառավարչի գործառույթներ իրականացնելը վերապահված է լիազոր մարմնին: Առաջարկվում է այդ լիազորությունը տալ համայնքի ղեկավարին: 2. <<Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծում պետք է հղում տալ <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքին, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով:	Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
18.	ՀՀ Ազգային ժողովի	1. Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.1 հոդվածի 1-ին մասում հստակեցնել՝ թե	Ընդունվել է:	Նախագծով սահմանվել է, որ Մասնավոր գերեզմանատները

	պատգամավոր՝ Հովհաննես Մարգարյան	իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ինչ իրավունքով են իրենց տրամադրված հողամասերում կազմակերպվում մասնավոր գերեզմանատները: 2. Բացառել 15 տարուց հետո աճյունասափորը ոչնչացնելու կարգավորումը: Աճյունասափորը պետք է պահպանվի անժամկետ:	Ընդունվել է:	կազմակերպվում են սեփականության կամ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերում: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
19.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ Թևան Պողոսյան	1.Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 19.2 հոդվածի 3-րդ մասում <<15 տարի>> բառերը փոխարինել <<100 տարի>> բառերով: 2.Նախագծից բացառել 15 տարուց հետո աճյունասափորը ոչնչացնելու կարգավորումը:	Չի ընդունվել է Ընդունվել է	Նշված կարգավորումը վերաբերում է գերեզմանատունը շահագործողի կողմից հուղարկավորության ծառայությունների մատուցման համար պայմանագիր կնքելու դեպքերին: Իսկ ծառայությունների մատուցման պայմանագիրը 100 տարի

				ժամկետով կնքելը ոչ միայն նպատակահարմար չէ, այլև կարող է հուղարկավորությունների կազմակերպման առումով որոշակի խնդիրներ առաջացնել: 2. 15 տարուց հետո աճյունասափորը ոչնչացնելու կարգավորումը նախագծից հանվել է: